ՆԵՂ ԴՈՒՌ ՆԵՂ ՃԱՆԱՊԱՐՀ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

ՆԵՂ ԴՈՒՌ
ՆԵՂ ՃԱՆԱՊԱՐՀ

ՆԵՂ ԴՈՒՌ
ՆԵՂ ՃԱՆԱՊԱՐՀ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

Narrow Gate, Narrow Way, Paul Washer, Armenian
© 2022 by Paul Washer

Նեղ դուռ, նեղ ճանապարհ, Փոլ Վոշեր, հայերենով
Թարգմանված է անգլերենից, 2022թ.
Հեղինակային իրավունքները պատկանում են
«2022 Paul Washer»-ին

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի
ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրի-
նակվել որևէ կերպ՝ առանց գրավոր թույլտվության:
Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվա-
ծաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից
են, եթե չկան այլ նշումներ:

Բովանդակություն

Հեղինակի աղոթքը.....VII

Մատթեոս 7.13-27.....1

1. Փորձի՛ր ինքդ քեզ.....3

2. Մտի՛ր նեղ դռնով.....15

3. Քայլի՛ր նեղ ճանապարհով.....23

4. Իրենց պտղի՛ց կճանաչեք նրանց.....33

5. Հավատքի անպտուղ
դավանություններ.....45

6. Արդյո՞ք Հիսուսը ճանաչում է քեզ.....53

7. Մարդկանց երկու տեսակ.....59

8. Իրական սրբություն.....67

9. Ո՞րն է քո պատասխանը.....73

Եզրափակիչ աղոթք.....79

Հեղինակի աղոթքը

Հա՛յր, ես շատ առումներով այնքա՜ն փոքր եմ և այնքա՜ն խեղճ: Դողում եմ այն մտքից, որ կեղծ կրակ չբերվի Քո խորանի մոտ: Իսկ ի՞նչ կլինի, եթե երկնքից կրակ իջնի՝ աշխարհի այս աղմուկի, գոռգոռոցների և իրարանցման մեջ: Եթե երկնքից կրակ իջնի, այս մեռած ոսկորները կկենդանանան: Դու գիտես, Տե՛ր:

Աղոթում և աղաչում եմ Աստծո գահի առջև, որ Քո գերիշխանության մեջ գթառատ լինես մեր նկատմամբ, որ բացես մեր սրտերը և մտքերը: Տե՛ր, մենք չենք կարող ակնկալել, որ մարդիկ իրենք կբացեն իրենց սրտերը. նրանք երբեք չեն անի

դա: Դո՛ւ բացիր նրանց սրտերը և մտքերը, որպեսզի տեսնեն աստվածաշնչյան ճշմարտությունը: Շունչդ փչի՛ր նրանց վրա: Նրանց շնորհի՛ր ապաշխարություն. հավա՛տք շնորհիր:

Բե՛ր նրանց Քո արքայության մեջ՝ Տե՛ր, Քո փառքի համար, Քո մեծ անվան համար. արա՛ այս բանը, Տե՛ր: Իրականությո՛ւն դարձրու սա, Տե՛ր, որպեսզի ոչ ոք իրեն չվերագրի այդ ամենը, որպեսզի ոչ ոք ձեռքը չդնի Աստծո Ուխտի տապանակի վրա և մահվան զարկը չստանա: Օ՜, Աստվա՛ծ, խնդրում եմ՝ շարժվի՛ր մեզանում, որովհետև մենք այլ հույս չունենք: Այս երիտասարդները այլ բանի հուսալ չեն կարող, բայց միայն՝ Քո շարժին: Ամե՛ն:

Մատթեոս 7.13-27

«Նեղ դռնո՛վ ներս մտեք. որովհետև լայն է դուռը, և ընդարձակ է ճանապարհը, որ կորուստն է տանում: Եվ շատերն են նրանով գնացողները: Որքա՜ն նեղ է դուռը, և նեղված է ճանապարհը, որ տանում է կյանք, և քիչ են նրան գտնողները: Զգո՛ւշ կացեք սուտ մարգարեներից, որ գալիս են ձեզ մոտ ոչխարների հանդերձներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց պտուղների՛ց նրանց ճանաչեք. մի՞թե փշերից խաղող են քաղում, կամ տատասկից՝ թուզ: Այսպես ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը չար պտուղ է բերում: Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը՝ բարի պտուղ բերել: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում է և

կրակի մեջ գցվում: Ուրեմն, իրենց պտուղներից ճանաչեք նրանց: Ոչ թե ամեն Ինձ «Տեր, Տեր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է: Շատերը կասեն Ինձ այն օրը՝ «Տեր, Տեր», չէ՞ որ Քո անունով մարգարեացանք, և Քո անունով դևեր հանեցինք, և Քո անունով շատ զորություններ գործեցինք: Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դեն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ: Արդ, նա, որ Իմ այս խոսքերը լսում է և կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա հաստատված էր: Եվ նա, ով որ Իմ այս խոսքերը լսում է և չի կատարում, նա կնմանվի մի անխելք մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և այն կործանվեց, և նրա կործանումը մեծ էր»:

1

Փորձիր ինքդ քեզ

Ինձ համար ահռելի մեծ արտոնություն է ձեզ այսկերպ դիմելը[1]: Քարոզելու եմ այնպես, ինչպես մահացողը կքարոզեր մահացողներին: Քարոզելու եմ այնպես,

1 Այս գրքույկի մեջ զետեղված նյութը սկզբնապես ներկայացվել է հատուկ առիթով տրված քարոզի տեսքով: Այդուհանդերձ, այս աշխատությունը այդ քարոզի լոկ սղագրումը չէ: Փոփոխությունների մեծ մասն արվել է բանավոր, քարոզչական խոսքը վերածելու գրավոր և առավել գրական խոսքի: Հիմնական նպատակն է եղել պահպանել քարոզչական ուժը՝ միևնույն ժամանակ հետևելով գրական խոսքի կանոններին և օգտվելով դրանցով պայմանավորված հնարավորություններից: Բոլոր վերանայումներն արված են՝ հարգելով քարոզչի խոսքի իմաստը, քարոզի հոգևոր միտումը և ամենից առավել՝ Աստծուն, Ում Խոսքը հռչակվում է:

կարծես այլևս քարոզելու հնարավորություն չեմ ունենալու, և ասելու եմ բաներ, որոնք գուցե թյուր կերպով ընկալվեն:

Ասելու եմ բաներ, որոնք գուցե բարկացնեն ձեզ. բաներ, որոնք գուցե մերժեք: Ասելու եմ բաներ, որոնք ասելու իրավունք գուցե չունեմ՝ ըստ ձեզ: Սակայն, մինչ ինչ-որ եզրահանգում կանեք ասվածի վերաբերյալ, կա մի հարց, որը պետք է ուղղեք ինքներդ ձեզ:

Այդ հարցը շտկելու կարիք կա, քանի որ քարոզելը վտանգավոր բան է: Այն վտանգավոր է ինձ համար, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ կեղծ ուսուցիչներն ավելի մեծ դատապարտության են արժանանալու: Եթե այն, ինչ ասում եմ, ճշմարիտ չէ, ապա ես մեծ խնդիրներ կունենամ: Ուստի, սա անում եմ մեծ երկյուղով և դողով՝ հասկանալով, որ կարող եմ Աստծո դատապարտությանն արժանանալ: Սակայն եթե այն, ինչ այսօր ասում

եմ, ճշմարիտ է, ապա դուք ունեք երկյուղելու և դողալու լուրջ պատճառ: Եթե ճիշտ մեկնեմ սուրբգրային այն հատվածը, որը պատրաստվում եմ ներկայացնել, ապա կստացվի, որ Աստված խոսում է մարդու միջոցով: Ուստի, ձեր խնդիրն ինձ հետ չի լինի, այլ՝ Աստծո և Նրա Խոսքի: Ահա և առանցքային հարցը, որի պատասխանը պետք է գտնել. արդյոք մեր առջև կանգնած մարդը կեղծ մարգարե է, թե՞ ճշմարտությունն է խոսում: Եթե ճշմարտությունն է խոսում, ապա մեզ ոչինչ չի մնում՝ բացի մեր կյանքերն այդ ճշմարտությանը հարմարեցնելուց:

Մենք քննարկելու ենք Քրիստոսի խոսքերը, որոնք գրված են Մատթեոսի Ավետարանի յոթերորդ գլխում: Դրանք կարդալիս ինձ չի մտահոգում ձեր ինքնագնահատականը, ինձ չի մտահոգում՝ արդյո՞ք գոհ եք ձեզնից, արդյո՞ք ձեր կյանքն այնպես է դասավորվում, ինչպես ցանկանում

եք, կամ՝ արդյո՞ք ձեր եկամուտները համամասնական են ձեր ծախսերին: Կա միայն մեկ բան, ինչի պատճառով գիշերները չեմ կարողանում քնել: Միայն մեկ բան կա, որ հուզում է հոգիս. հարյուր տարվա ընթացքում այս փոքրիկ գիրքն ընթերցողների մեծ մասը գուցե դժոխքում լինի: Նույնիսկ շատերը, ովքեր Հիսուս Քրիստոսին Տեր են դավանում, միգուցե հավիտենությունն անցկացնեն դժոխքում:

Գուցե հարցնեք. «Ինչպե՞ս կարող ես նման բան ասել»: Կարո՛ղ եմ ասել, քանի որ իմ քրիստոնեական աշխատանքի մեծ մասն արել եմ Ամերիկայից դուրս: Շատ ժամանակ եմ անցկացրել՝ քարոզելով Հարավային Ամերիկայում, Աֆրիկայում և Եվրոպայի արևելյան մասում: Ուզում եմ, որ իմանաք, որ նայելով ամերիկյան քրիստոնեությանը՝ կարելի է տեսնել, որ այն ավելի հիմնված է անաստված մշակույթի, քան Աստծո Խոսքի վրա:

Մեծ թվով երիտասարդներ և մեծահասակներ խաբված են՝ կարծելով՝ եթե կյանքում մեկ անգամ մի աղոթք են արել, ապա գնալու են Երկինք: Նրանք նայում են իրենց շրջապատող մարդկանց, ովքեր ասում են, թե ճանաչում են Քրիստոսին, և տեսնում են, որ վերջիններս ապրում են այնպես, ինչպես աշխարհն է ապրում. նրանք համեմատվում են իրենց նմաններրի հետ, այդ պատճառով էլ ոչինչ չի անհանգստացնում նրանց սրտերը: Մտածում են այսպես. «Ես այնպիսին եմ, ինչպիսին մեր երիտասարդական խմբակի անդամներն են: Հեռուստացույցով դիտում եմ բաներ, որոնք չպետք է դիտեմ, ծիծաղում եմ այնպիսի բաների վրա, որոնք Աստված ատում է: Կրում եմ գայթակղող հագուստ: Խոսում եմ այնպես, ինչպես այս աշխարհն է խոսում: Քայլում եմ այնպես, ինչպես այս աշխարհն է քայլում: Սիրում եմ այս աշխարհի երաժշտությունը: Շատ եմ սիրում

այն, ինչ այս աշխարհում է, սակայն, փա՛ռք Աստծուն, քրիստոնյա եմ: Իսկ ի՞նչ գիտեմ, որ քրիստոնյա եմ. այդքան էլ չեմ տարբերվում իմ եկեղեցում եղող շատ մարդկանցից: Ի՞նչ գիտեմ, որ քրիստոնյա եմ: Քրիստոնյա եմ, քանի որ ինչ-որ մի օր աղոթել և խնդրել եմ, որ Հիսուս Քրիստոսը գա իմ սրտի մեջ»:

Ցանկանում եմ՝ իմանաք, որ ամերիկյան ավետարանական և բողոքական եկեղեցու ամենամեծ հերձվածությունը այն կեղծ գաղափարն է, որ եթե աղոթեք և խնդրեք, որ Հիսուս Քրիստոսը գա ձեր սրտի մեջ, ապա Նա անպայման կգա: Սակայն, Սուրբ Գրքում որևէ տեղ նման բան գրված չէ: Նման բանի հաճախ չեք հանդիպի նաև եկեղեցու պատմության մեջ՝ մինչև վերջին մեկ կամ երկու դարերը: Պետք է իմանալ, որ փրկությունը տրվում է միայն Հիսուս Քրիստոսին ուղղված հավատքի միջոցով: Իսկ Հիսուս Քրիստոսին ուղղ-

ված հավատքը ապաշխարության անբաժանելի մասն է: Ապաշխարությունը շրջադարձ է մեղքից՝ ատելություն այն բաների նկատմամբ, որոնք Աստված է ատում, և սեր այն բաների նկատմամբ, որոնք Աստված է սիրում. այն աճ է սրբագործման մեջ և ցանկություն է չլինել այնպիսին, ինչպիսին ամենաժամանակակից փոփ-կուռքն է, ինչպես աշխարհն է կամ ամերիկացի քրիստոնյաների մեծ մասը: Այն Հիսուս Քրիստոսին նմանվելու ցանկություն է: Գուցե չգիտակցեք, որ այս խոսքերը ձեզ են վերաբերում: Այս բաները չեմ ասում՝ ձեր հարանվանությանը կամ ծափահարություններին արժանանալու համար. խոսում եմ ձեզ հետ և ձեր մասին:

Շատ հաճախ մարդիկ մոտենում են ինձ՝ նման ինչ-որ քարոզչի, և ասում են. «Գիտե՞ք, կցանկանայի ձեզ հետ Ռումինիա գնալ» կամ՝ «Կցանկանայի ձեզ հետ Ուկրաինա գնալ», կամ՝ «Կցանկանայի

քարոզել Պերուի ջունգլիներում՝ այնտեղ, որտեղ դուք եք քարոզել և եկեղեցիներ հիմնել»:

Իսկ ես ասում եմ նրանց. «Ո՛չ, չէիք ցանկանա»: Նրանք պատասխանում են. «Այո՛, կցանկանայի», ինչին ես կրկին պատասխանում եմ. «Ո՛չ, չէիք ցանկանա»: «Ինչո՞ւ»: «Որովհետև ձեզ կարտաքսեին այնտեղի եկեղեցուց»:

Խստությունս ինքնանպատակ չէ: Պատկերացնո՞ւմ եք՝ որքան սեր պետք է ունենաս, որպեսզի խոսքդ ուղղես այսքան մարդկանց և ասես, որ ամերիկյան քրիստոնեությունը գրեթե լիովին սխալ է: Գիտե՞ք, թե ինչ գին ունի դուրս գցվելը, մարդկանց համակրանքը չվայելելը: Իսկ գիտե՞ք, թե ինչու են հավատարիմ քարոզիչներն անում դա. ո՛չ այն պատճառով, որ դրա համար նրանց լավ վարձատրում են, ո՛չ էլ այն պատճառով, որ մարդիկ նրանց սիրում են: Մենք դա անում ենք, քանի որ

սիրում ենք մարդկանց, և ավելին՝ ցանկանում ենք պատվել Աստծուն:

Ուզում եմ մի բան ասել: Մենք ուսումնասիրելու ենք Աստծո Խոսքը, և ցանկանում եմ, որ այն դիտարկենք այնպես, ինչպես իրականում կա: Սա նշանակում է, որ պետք է ձեզ համեմատեք ոչ թե նրանց հետ, ովքեր իրենց քրիստոնյա են անվանում, այլ՝ Աստծո Խոսքի հետ:

Երբ երիտասարդը մոտենում է հովվին կամ երիտասարդականի ծառայողին ու ասում, որ վստահ չէ իր փրկության հարցում, ծառայողը սովորաբար հաճախ կրկնվող արտահայտություն է անում. «Կյանքում եղե՞լ է այնպիսի պահ, երբ աղոթել ու խնդրել ես, որ Հիսուսը դառնա քո սրտի Տերը»:

«Այո՛, եղել է»:

«Անկե՞ղծ ես աղոթել»:

«Չգիտեմ. կարծում եմ՝ այո»:

«Ուրեմն, պետք է ասես սատանային,

որ դադարի անհանգստացնել քեզ: Աստվածաշնչիդ հետևում գրի առնել ես այն, ինչ ավետարանիչն ասել է, երբ փրկության ես եկել: Գրի առնել ես ամսաթիվը, որպեսզի ամեն անգամ, երբ մտքումդ կասկած ծնվի, կարողանաս մատնանշել նրան Աստվածաշունչը»:

Ինչ սնահավատություն է պաշարել մեր հարանվանություններին ու եկեղեցիներին: Գիտեք, թե ինչ է ասում Աստվածաշունչը, որ մենք՝ քրիստոնյաներս, անենք. քննենք ինքներս մեզ: Փորձիր ինքդ քեզ Սուրբ Գրքի լույսի ներքո և տես, թե արդյոք հավատում ես: Փորձիր ինքդ քեզ և տես, թե արդյոք քրիստոնյա ես:

Գիտակցո՞ւմ եք արդյոք, որ եթե գնաք և թակեք մարդկանց դռներն Ամերիկայի և շատ այլ երկրների գյուղերում, մեծ և փոքր քաղաքներում, կհայտնաբերեք, որ մարդկանց մեծ մասն իրենց հավատացյալ են համարում: Փրկվելուց հետո գնացի

իմ ծննդավայր և թակեցի բոլորի դռները, և գիտեք, թե ինչ պարզվեց: Իմ քաղաքում բոլորը քրիստոնյա են: Նրանց մեծ մասը եկեղեցի չի հաճախում, իսկ եկեղեցի հաճախողներին չի մտահոգում սրբությունը: Նրանց չի մտահոգում ծառայելը, չի մտահոգում աշխարհից զատվելը: Նրանց հոգը չէ Ավետարանը ազգերին հասցնելը: Սակայն նրանք համոզված են, թե փրկված են:

Ինչո՞ւ են կարծում, թե փրկված են. քանի որ ինչ-որ ավետարանիչ, ով ավելի քիչ ժամանակ պետք է հատկացներ քարոզելուն և ավելի շատ ժամանակ՝ Աստվածաշնչի ուսումնասիրությանը, ասել է նրանց, որ փրկված են, որպեսզի հաջորդ արթնության ժամանակ կարողանա գլուխ գովել, թե քանիսն են առաջ եկել ապաշխարության:

2

Մտի՛ր նեղ դռնով

Հուսամ, որ թեկուզև խոսքս սիրով էր շաղախված՝ կարողացա ցնցել ձեզ և բերել որոշակի գիտակցման: Հիմա կցանկանամ անդրադառնալ Սուրբ Գրքին: Ակա՛նջ դրեք Աստծո Խոսքին և որոշ հարցեր ուղղե՛ք ինքներդ ձեզ: Նախ և առաջ, Մատթեոս 7.13-ում ասվում է. «Նեղ դռնո՛վ ներս մտեք. որովհետև լայն է դուռը և ընդարձակ ճանապարհը, որ կորուստն է տանում, և շատ են նրանով գնացողները»:

Կա մեկ նեղ դուռ: Կա մեկ Աստված: Եվ կա մեկ միջնորդ Աստծո և մարդու միջև՝

Հիսուս Քրիստոսը: Այստեղ բազմակի ընտրություն չկա: Հնում մարդիկ ասում էին, թե բոլոր ճանապարհները Հռոմ են տանում: Սակայն բոլոր ճանապարհները չէ, որ Աստծո մոտ են տանում: Հիսուսն ասաց մարդկանց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ՝ Ինձանով» (Հովհ. 14.6):

Փա՛ռք եմ տալիս Աստծուն, որ միակ ճանապարհը, որով այս երկրի վրա մարդը կարող է փրկվել, Հիսուս Քրիստոսն է: Հարկավոր է ունենալ այն գիտակցումը, որ ինչպես Աստվածաշունչն է ասում՝ «ամենքը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են» (Հռոմ. 3.23): Սա նշանակում է, որ մենք ծնվել ենք արմատապես այլասերված և աստվածատյաց, և ինքներս երբևէ չէինք փնտրի Աստծուն: Մենք ապստամբել էինք Աստծո առջև և խախտել բոլոր օրենքները: Հարցը պարզապես այն չէ, որ մեղք եք գործել. խնդիրն այն է, որ մեղ-

քից բացի այլ բան չեք արել: Մարգարեների միջոցով Աստվածաշունչն ասում է, որ նույնիսկ մեր ամենալավ գործերը Աստծո աչքերում նման են աղտոտ լաթի: Իսկ գիտե՞ք, թե այդ ամենի պատճառով ինչի ենք արժանի՝ Աստծո ցասմանը, Աստծո սուրբ ատելությանը:

Գուցե ասեք. «Մեկ րոպե. Աստված ոչ մեկին չի ատում: Աստված սեր է»: Ո՛չ, բարեկա՛մս: Կա մի բան, որը պետք է հասկանաք: Հիսուս Քրիստոսը, մարգարեները և առաքյալները սովորեցրել են հետևյալը՝ եթե չլիներ Աստծո շնորհքը՝ արտահայտված մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, ապա միակ բանը, որը կմնար ձեզ, Աստծո ցասումն ու կատաղի բարկությունն է՝ ձեր ապստամբության և մեղքի պատճառով:

Երբ համալսարաններում նման բան եմ քարոզում, ուսանողները և ուսուցիչները միշտ արագ ուղղում են ինձ՝ «ո՛չ, Աստված չի կարող ատել, քանի որ Նա սեր է»:

Իսկ ես ասում եմ ձեզ, որ Նա *պետք է* ատի, քանի որ Նա սեր է: Օրինակ՝ ես սիրում եմ երեխաներին, այդ պատճառով ատում եմ արհեստական վիժեցումը: Եթե ես սիրում եմ այն, ինչ սուրբ է, ապա պետք է ատեմ այն, ինչն անսուրբ է: Աստված սուրբ Աստված է: Սա մի բան է, որ ամերիկացիների մեծ մասը և այլ ազգություններ մոռացել են: Շատ բաներ, որոնք դուք սիրում եք անել, Աստված ատում է: Արդյոք գիտեի՞ք դա:

Աղոթում եք արթնության համար: Գուցե հրաշալի հավաքույթի եք պատրաստվում: Ցանկանում եք, որ Աստված շարժվի, սակայն մինչ այնտեղ գնալը հեռուստացույցով դիտում եք այնպիսի հաղորդումներ, որոնցից Աստված նողկանք է ապրում: Ապա զարմանում եք, թե ինչու Սուրբ Հոգին չթափվեց այդ վայրում, և ինչու դուք ստիպված եղաք կեղծ կրակ և կեղծ ոգևորություն ստեղծել: Պատասխանն այն է, որ Աստված դրանում չէ:

Աստված սուրբ Աստված է, և միակ ճանապարհը, որով երբևէ կարող ենք հաշտվել սուրբ Աստծո հետ, Աստծո Որդու մահն է խաչի վրա:

Եթե դուք փրկված եք ձեր մեղքերից, դա այն բանի շնորհիվ չէ, որ հռոմեացիները և հրեաները մերժեցին Հիսուսին: Ձեր փրկության պատճառն այն չէ, որ Նրա գլխին փշե պսակ դրին, ոչ էլ այն՝ որ գեղարդով խոցեցին Նրա կողը կամ խաչին գամեցին Նրան: Գիտեք, թե ինչու եք փրկված (եթե իսկապես փրկված եք): Փրկված եք, քանի որ խաչից կախված Հիսուս Քրիստոսը կրում էր ձեր մեղքը: Ամբողջությամբ Աստծո միածին Որդու վրա թափվեց Աստծո ժողովրդի մեղքը և Աստծո կատաղի բարկությունը, որը պետք է ձեզ վրա թափվեր: Ինչ-որ մեկը պետք է վճարեր այդ գինը: Ինչ-որ մեկը պետք է մահանար: Հայր Աստված էր, որ ջախջախեց Իր միածին Որդուն: Ըստ Եսայի 53.10-ի՝ «Տե-

ը հաճեց Նրան զարկել»: Մարդիկ ասում են, որ խաչը մարդու գինն է: Դա ճիշտ չէ:

Խաչը նշանն է այն բանի, թե որքան այլասերված ենք մենք: Միակ բանը, որը կարող էր փրկել մեզ պես մարդկանց, այն էր, որ Աստծո Որդին պետք է կրեր Իր Հոր ցասումը, Իր մահով վճարեր մեր մեղքի գինը և հարություն առներ մեռելներից: Սրանք հզոր խոսքեր են. սա Հիսուսի Ավետարանն է:

Իսկ ի՞նչ եք դո՛ւք կանչված անելու: Դուք պետք է մտնեք նեղ դռնով: Ինչպե՞ս անել դա: Հիսուսն ասել է. «Ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մոտեցել է» (Մարկ. 1.15):

Գուցե ասեք. «Ես փրկվել եմ՝ աղոթելով և խնդրելով, որ Հիսուս Քրիստոսը գա իմ սրտի մեջ»: Վստահ եմ, որ այդպես էլ արել եք, սակայն դուք չեք փրկվել կախարդական բանաձևով կամ ինչ-որ բառերով, որոնք կրկնել եք ինչ-որ մեկի առաջնոր-

դությամբ: Փրկվել եք, քանի որ ապաշխարել եք ձեր մեղքերից և հավատացել եք: Եվ ոչ միայն արել եք դա անցյալում, այլև շարունակում եք անել մինչև օրս: Ապաշխարելու և Իր Թագավորության բարի լուրն ընդունելու Հիսուսի կանչը մեղավորներին՝ կարելի է բառափոխել հետևյալ կերպ.

«Աստծո թագավորությունը եկել է: Ժամանակը լրացել է: Այժմ ձեր կյանքի մնացած մասն անցկացրեք՝ ձեր մեղքերից ապաշխարելով և Ինձ հավատալով»:

Դարձի գալը նման չէ գրիպի դեմ պատվաստանյութ ստանալուն. «Ես արդեն արել եմ դա. ապաշխարել եմ և հավատացել եմ»: Կարևորն այն է՝ արդյո՞ք շարունակում եք ապաշխարել մեղքից, շարունակո՞ւմ եք հավատալ: Աստծո շնորհքով դա իրականանալի է, քանի որ Նա, Ով սկսեց բարի գործը ձեզանում, նույնպես ավարտին *կհասցնի:*

3

Քայլի՛ր նեղ ճանապարհով

Մենք քարոզում ենք, որ դուք պետք է մտնեք միակ դռնով, որը Հիսուս Քրիստոսն է: Սակայն շատ ավետարանականներ մոռացել են մի կարևոր բան: Կցանկանամ, որ հովիվները, ծնողները, երիտասարդներին ծառայողները և նրանք, ովքեր նմանատիպ հեղինակություն ու ազդեցություն ունեն, նկատի առնեն այն, որ մենք մոռացել ենք Աստծո Ավետարանի շատ կարևոր ուսմունքը. ոչ միայն դուռն է նեղ, այլև՝ ճանապարհը: Մենք մեծ մասամբ առաջնորդում ենք մարդկանց դեպի

Քրիստոսը, առաջնորդում աղոթքի մեջ, սակայն նրանք շարունակում են իրենց կյանքերն ապրել՝ ինչպես այս ընկած աշխարհն է ապրում: Եթե կասկածում եք այս խոսքերի ճշմարտացիությանը, ապա կարող եմ վիճակագրական տվյալներ տրամադրել, որոնք կապացուցեն, որ սխալվում եք: Եթե ուսումնասիրեք Գելափի, Բարնայի կամ այլ հարցումների արդյունքները, ապա կտեսնեք, որ կենսակերպի քիչ տարբերություն կա ամերիկյան եկեղեցիների բարոյական վարքագծի և այն մարդկանց բարոյական վարքագծի միջև, ովքեր չեն ընդունում Քրիստոսին:

Եվ այս տեղեկատվությունը պայմանավորված չէ կրոնական մեկնաբանություններով, լոկ՝ չոր վիճակագրություն է:

Աստվածաբանները, փիլիսոփաները և հասարակագետները հաջորդաբար գրքեր են հրատարակում: Ինչ է պատահել եկեղեցուն: Տեսնում ենք, որ արհես-

տական վիժեցումները եկեղեցում գրեթե նույնքան տարածված են, որքան աշխարհում: Տեսնում ենք, որ ոչ աստվածաշնչյան հիմունքներով ապահարզանները գրեթե նույնքան տարածված են եկեղեցում: Տեսնում ենք ահագնացող անբարոյականություն: Ինքներդ գիտեք, որ շատ են նրանք, ովքեր անբարո վարմունք ունեն, սակայն երկրպագում են եկեղեցում (և գուցե դուք էլ, որ այս գիրքն ընթերցում եք, նրանցից մեկն եք): Կան երիտասարդներ, ովքեր թմրադեղեր են օգտագործում և մասնակցում երիտասարդական խմբակների: Իրենց քրիստոնյա անվանողները դիտում և անում են բաներ, որոնք հարիր չեն քրիստոնյային, և շարունակում են մասնակցել երիտասարդական խմբակների՝ կարծելով, թե ամեն բան կարգին է, և իրենք փրկված են: Այս ամենին քչերն են ավելի ծավալուն արձագանք տալիս, քան հետևյալ խոսքերն են. «Նրանք մարմնա-

վոր քրիստոնյաներ են: Իրականում քրիստոնյա են, սակայն՝ մարմնավոր»: Սա մի ուսմունք է, որը սկիզբ է առել ամերիկյան մկրտական սեմինարիայում մի քանի տասնամյակ առաջ: Այն ոչ աստվածաշնչյան է, ոչ պատմական: Բարեկամս, գոյություն չունի «մարմնավոր քրիստոնյա» հասկացություն:

Ոմանք գուցե ասեն. «Իսկ ինչ կասեք Ա Կորնթացիների 3-րդ գլխի մասին, որտեղ Պողոս առաքյալը հետևյալ արտահայտությունն է անում՝ «տակավին մարմնավոր եք»»:

Այո՛, Պողոս առաքյալը նման բան ասել է: Սակայն հարկավոր է կարդալ ամբողջ թուղթը՝ հասկանալու համար, թե ինչ նկատի ուներ: Մեր ամենամեծ խնդիրն այն է, որ մեր քրիստոնեության մեծ մասը հիմնված է այն տարածված արտահայտությունների վրա, որոնք կարդում ենք քրիստոնեական վերնաշապիկներին: Մեր

քրիստոնեության մեծ մասը թելադրված է երգերի հեղինակների կողմից, և ոչ թե Աստվածաշնչից: Մեր համոզմունքների մեծ մասը պայմանավորված է մեր մշակույթով, և ոչ թե Աստվածաշնչով: Աստվածաշունչը երբևէ չի սովորեցրել, որ մարդը կարող է լինել անկեղծ քրիստոնյա և միևնույն ժամանակ շարունակել ապրել մարմնականի և չարության մեջ՝ մեղանչելով իր կյանքի բոլոր օրերում: Իրականում, Աստվածաշունչը սովորեցնում է, որ անկեղծ քրիստոնյային նոր բնություն է տրված:

Անկեղծ քրիստոնյաներն ունեն երկնային Հայր, Ով սիրում, խրատում, հսկում և հոգ է տանում իրենց մասին:

Սիրտս ճմլվում է, քանի որ դուք ևս գիտեք այս մասին այնպես, ինչպես ես: Այս ամենի մեջ կեղծավորություն չանենք: Չթաքցնենք այս ամենը: Շատերն են ընկնում այս ծուղակը: Դուք ճանաչում եք նրանց: Գուցե նրանցից մեկն եք,

կամ, առնվազն գիտեք, որ կան այդպիսիք ձեր եկեղեցում կամ տնային խմբակում: Նրանք կատարում են կրոնական մասը, սակայն իրենց սրտում հնարավորինս չար են: Նրանց և աշխարհականների միջև ոչ մի տարբերություն չկա: Չկա լույս: Նրանք անում են այն, ինչ այս աշխարհն է անում, և կարծում են, թե դա ընդունելի է: Եթե իրենց հարցնեք, կասեն, որ ամեն բան կարգին է: Բարեկա՛մս, դա քրիստոնեություն *չէ:* Նրանք ոչ միայն վտանգում են իրենց վարձքը, այլև կրում են դժոխք գնալու վտանգը: Նրանք չեն ճանաչում Աստծուն:

Ի՞նչն է պակասում մեր ուսմունքի մեջ: Ե՞րբ եք վերջին անգամ լսել, որ ասեն՝ նեղ է ոչ միայն այն միակ դուռը, որը Երկինք է տանում, այլև՝ միակ ճանապարհը:

Հիսուսը նշում է, որ անկեղծ քրիստոնյա լինելու գլխավոր նշաններից է նեղ ճանապարհով քայլելը: Իսկ գիտե՞ք, թե որն

է անկեղծ քրիստոնյա լինելու գլխավոր նշանն Ամերիկայում ապրողների մեծ մասի համար՝ մեկ անգամ մի աղոթք անելը: Մի՞թե հրաշալի չէ: Ի՞նչ հարց են ուղղում ձեզ, երբ կասկածում եք, որ փրկված եք. «Այդ աղոթքը մեկ անգամ արե՞լ եք»: Սակայն ահա, թե ինչ է սովորեցնում Սուրբ Գիրքը. «Փորձե՛ք ձեր անձերը, թե արդյոք հավատքի մե՞ջ եք. քննե՛ք ձեր անձերը: Կամ թե չգիտե՞ք ձեր անձերը, որ Հիսուս Քրիստոսը ձեզանում է. միայն եթե անպիտան լինեք» (Բ Կորնթ. 13.5): Փորձե՛ք ինքներդ ձեզ Աստծո Խոսքի լույսի ներքո՝ տեսնելու, թե արդյո՞ք ճիշտ ճանապարհին եք, քանի որ քրիստոնյան պետք է տարբերվի:

Արդյոք ասածս նշանակո՞ւմ է, որ քրիստոնյան առանց մեղքի է: Ո՛չ, քանի որ Հովհաննեսի Առաջին թղթում տեսնում ենք, որ քրիստոնյաները մեղք գործում են, և եթե մարդը չի ընդունում իր մեղքը,

ապա նշանակում է, որ չի ճանաչում Աստծուն ու չի քայլում լույսի մեջ: Այսպիսով, ո՞րն է տարբերությունը: Ի՞նչ նկատի ունեմ այս ամենով: Ընդամենը հետևյալը. եթե դուք անկեղծ, վերստին ծնված քրիստոնյա եք՝ Աստծո զավակ, ապա արդարության ուղիով քայլելը կլինի ձեր կենսակերպը: Իսկ եթե դուրս գաք արդարության ուղուց, Հայրը կգա օգնության:

Նա կխրատի ձեզ, կվերադարձնի ճիշտ ճանապարհին: Այդուհանդերձ, եթե ասում եք, թե նեղ դռնով եք մտել, սակայն ապրում եք լայն ճանապարհի մեջ, ինչպես մյուսները ձեր ավագ դպրոցում կամ աշխատավայրում, ինչպես բոլոր մարմնավոր և չար մարդիկ, ապա Աստվածաշունչը զգուշացնում է, որ դուք պետք է մտահոգվեք, քանի որ չեք ճանաչում Աստծուն:

Ես մտահոգվում եմ այն մարդկանց համար, ովքեր իրենց կյանքի մեծ մասն անցկացրել են՝ ուրիշներին ասելով, թե

վերջիններս փրկված են: Մտահոգվում եմ ձեզ համար, եթե դուք էլ այդկերպ եք վարվել: Քարոզչի գործը մարդկանց ասելը չէ, թե փրկված են, այլ սովորեցնելը՝ ինչպես փրկվեն: Աստված է ասողը, որ փրկված են: Մենք մոռացել ենք, որ փրկությունը Աստծո գերբնական աշխատանքն է: Ովքեր անկեղծությամբ դարձի են եկել, Սուրբ Հոգու զորությամբ վերաստեղծվում են և նոր արարած դառնում: Աստվածաշունչն ասում է. «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է...» (Բ Կորնթ. 5.17): Սուրբ Գրքում տեսնում ենք, որ կա դեպի հավիտենական կյանք տանող մեկ նեղ դուռ և մեկ նեղ ճանապարհ:

4

Իրենց պտղից կճանաչեք նրանց

Հիմա տեսնենք, թե ինչ է ասվում Մատթեոս 7.15,16 խոսքերում. «Զգո՛ւյշ կացեք սուտ մարգարեներից, որ գալիս են ձեզ մոտ ոչխարների հանդերձներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց պտուղներից նրանց ճանաչեք»: Տարիներ առաջ մի իմաստուն հետևյալն ասաց. «Լավագույն ընկերդ այն մարդն է, ով քո մասին ճշմարտությունն ամենաշատն է ասում քեզ»: Հարկավոր է այս գիտակցումն ունենալ: Մենք՝ ամերիկացիներս,

այնքան նուրբ ենք դարձել, որ ոչ ոք չի կարող հանդիմանել մեզ: Ոչ ոք չի կարող ասել, որ սխալ ենք: Այս սուտն ընդունել են նաև ծառայողները և առաջնորդները: Մենք չենք ցանկանում վիրավորել մարդկանց, փոխարենը ցանկանում ենք ընկերներ շահել: Սակայն պետք է իմանալ, որ կա միայն Մեկը, Ով ճշմարտապես կարող է շահել մարդկանց. Աստված: Եթե ցանկանում եք ընկերանալ ձեր եկեղեցուց որևէ մեկի հետ, ապա պետք է ընկերանաք Աստծո հետ:

Կեղծ մարգարեի ամենաակնառու նշաններից է այն, որ նա միշտ ասում է ձեզ այն, ինչ դուք եք ցանկանում լսել: Նա երբեք չի խափանում ձեր ծրագրերը. այնպես է անում, որ ծափահարեք և թռչկոտեք, գլխապտույտ հույզեր է առաջացնում: Նա ձեզ զբաղեցնում է, այնպիսի քրիստոնեություն է ներկայացնում, որում եկեղեցին նմանվում է Հիսուսի թեմատի-

կայով զվարճանքի պուրակի: Ձեզ այնպես է զբաղեցնում, որ երբևէ չեք անդրադառնում կարևոր հարցերին, ինպիսիք են՝ արդյոք Աստված գործո՞ւմ է իմ կյանքում, արդյոք ես աճո՞ւմ եմ սրբության մեջ, արդյոք իրապես վերստին ծնվա՞ծ եմ:

Եթե համայնքում կամ, նույնիսկ, եկեղեցում բոլորը համոզված են, թե փրկված են (իսկ մենք Սուրբ Գրքից գիտենք, որ այդպես չէ, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ քչերը կմտնեն), ապա ինչպե՞ս *դուք* կարող եք իրապես իմանալ, որ փրկված *եք*. այն բանից, որ ինչ-որ մե՞կն է ասել ձեզ: Կամ՝ մեկ անգամ աղո՞թք եք արել: Կամ՝ հավատացե՞լ եք: Թույլ տվեք հարց ուղղել. որտեղի՞ց գիտեք, թե հավատացել եք: Ի վերջո, մարդկանց մեծ մասն ասում է, թե հավատում է՝ անկախ այն բանից, որ իրենց կյանքում պտղի պակաս կա: Ինչպե՞ս իմանաք, որ նրանց նման չեք: Գիտեք՝ Աստվածաշունչը սովորեցնում է, թե

ինչպես կարող ենք իմանալ, որ փրկված ենք: Գիտե՞ք, թե ինչու էին հավատարիմ ծառայությունները մինչև հիսուն տարի առաջ սովորեցնում փրկության մասին: Փրկության մեջ կարող եք համոզված լինել, երբ վստահում եք Աստծո խոստումներին, և ձեր կյանքը փոփոխման գործընթացի մեջ է, իսկ Աստծո ճշմարտության ուղիներով քայլելը՝ ձեր կենսակերպը:

Երբ իրական քրիստոնյան շեղվում է արդարության ուղիներից և սկսում քայլել անհնազանդության մեջ, ինչը բոլորիս հետ էլ պատահում է, Աստված օգնում է և վերադարձնում ճիշտ ճանապարհին: Ամենամեծ ապացույցն այն բանի, որ դուք վերստին ծնված եք, այն է, որ Աստված թույլ չի տա ձեզ քայլել այնպես, ինչպես ձեր մարմինն է ցանկանում:

Աստված թույլ չի տա, որ հագնվեք այնպես, ինչպես այս հեշտամոլ աշխարհն է

հագնվում, և ինչպես հեշտամոլ եկեղեցին թույլ է տալիս: Աստված թույլ չի տա, որ վարվեք աշխարհի նման, բուրեք աշխարհի նման, խոսեք աշխարհի նման, լսեք այն, ինչ աշխարհն է լսում. Աստված ձեր կյանքում փոփոխություն կբերի:

Քրիստոսն ասում է. «Իրենց պտղի՛ց կճանաչեք նրանց» (Մատթ. 7.16): Ինչպե՞ս կարելի է ճանաչել կեղծ մարգարեին: Իսկ եթե ավելի ընդհանրացնենք, ի՞նչ է ասում Սուրբ Գիրքն այն մասին, թե ինչպես կարող ենք ճանաչել անկեղծ քրիստոնյային. իրենց պտղից, բարեկա՛մս: Նայե՛ք ձեր կյանքին: Տեսե՛ք, թե ինչպես եք քայլում: Տեսե՛ք, թե ինչպես եք խոսում: Տեսե՛ք ձեր սրտում վառվող ցանկությունները: Արդյո՞ք Հիսուսը դրանցում կա, թե՞ Նա պարզապես զարդարանք է, որն ավելացրել եք ձեր կյանքին: Արդյո՞ք Նա ընդամենը մի բան է, որն անում եք չորեքշաբթի կամ կիրակի օրերին: Արդյո՞ք Նա մեկն է, որին

միայն մտավոր համաձայնություն եք տալիս, թե՞ Նա ձեր կյանքի կենտրոնն է: Եվ ի՞նչ պտուղ եք բերում: Մի՞թե նման եք այս աշխարհին: Մի՞թե վարվում եք այս աշխարհի նման:

Արդյո՞ք ուրախանում եք այն բաներից, որոնցից աշխարհն է ուրախանում: Արդյո՞ք սիրում եք մեղքը և հաճույք եք ստանում դրանից: Արդյո՞ք սիրում եք ապստամբությունը, այն հաճելի՞ է ձեզ: Եթե այո, ուրեմն Աստծուն չեք ճանաչում: Իրենց պտղի՛ց կճանաչեք նրանց: Աստված մեղավորի սիրտը փոխելու զորություն ունի, իսկ դա միշտ կյանքի փոփոխություն է բերում:

Մի պահ պատկերացրեք, որ ներկա եք այն պահին, երբ Հիսուսն այդ հատվածն է սովորեցնում: Նստած լսում եք Նրան: Տերը նայում է ձեզ և ասում. «Տատասկափշեր, տատասկափշեր: Արդյոք թզի ծառի վրա կա՞ն տատասկափշեր»:

Իսկ դուք պատասխանում եք. «Իհարկե՝ ոչ, Հիսուս: Բոլորը գիտեն, որ թզի ծառի վրա տատասկափշեր չկան»:

«Այդ դեպքում թույլ տուր մեկ այլ հարց ուղղել: Արդյոք փշի թփի վրա թուզ՝ բարի պտուղ աճում է»:

«Միանշանակ՝ ոչ, Հիսուս: Դա զավեշտալի կլիներ: Հնարավոր չէ փուշ տեսնել թզի ծառի վրա և թուզ՝ փշի թփի վրա: Մտածելը, որ նման բան հնարավոր է... կամ եթե որևէ մեկն ասի Քեզ, Հիսուս, որ նման բան հնարավոր է, իմացիր, որ այդ մարդը խելագարվել է կամ ստախոս է»:

Այնուհետև Հիսուսը կրկին խոսքն ուղղում է ձեզ. «Այդ դեպքում, ովքեր իրենց Իմ աշակերտն են կոչում և չար պտուղ բերում, մի՞թե կամ խաբում են, կամ խելքը թռցրել են»:

Թույլ տվեք մի փոքր էլ խորամուխ լինել սրա մեջ: Պատկերացրեք, որ ես պետք

է քարոզեմ և շտապելով բարձրանում եմ բեմահարթակ, քանի որ ուշացել եմ: Բոլոր առաջնորդներն՝ ինձ վրա բարկացած, ասում են. «Չե՞ս գնահատում արդյոք այն, որ քեզ այստեղից խոսելու հնարավորություն է ընձեռնված, և ուշացած ես ներկայանում»:

Ես կարող եմ պատասխանել. «Եղբայրնե՛ր, խնդրում եմ, ներե՛ք ինձ»:

«Ինչո՞ւ»,- հարցնում են նրանք:

«Մեքենաս մայրուղիով վարում էի այս ուղղությամբ, երբ անվադողը ծակվեց: Անվադողը փոխելիս՝ պտուտակը դուրս ընկավ: Իսկ ես՝ առանց հաշվի առնելու, որ մայրուղու վրա եմ, վազեցի, որպեսզի վերցնեմ պտուտակը: Մայրուղու մեջտեղում կռացա և վերցրի այն, իսկ երբ կանգնեցի, տեսա, որ ինձնից տասը մետր հեռավորության վրա հարյուր մղոն/ժամ արագությամբ դեպի ինձ է գալիս երեսուն

տոննա ծանրություն տանող անտառահատման բեռնատարը: Բեռնատարն անցավ իմ վրայով, այդ պատճառով էլ ուշացա»:

Գիտեմ, որ քչերն են տրամաբանության ուսումնասիրությամբ զբաղվում՝ որպես գիտություն, սակայն այստեղ հնարավոր է ընդամենը երկու տրամաբանական եզրահանգում անել: Առաջինը՝ ես ստախոս եմ, և երկրորդը՝ ես խելագար եմ: Ամենայն հավանականությամբ, ինձ կասեիք հետևյալը. «Դա անհեթեթություն է: Հնարավոր չէ բախվել անտառահատման բեռնատարին, և որևէ *փոփոխության* չենթարկվել»:

Ուստի, իմ հարցն էլ հետևյալն է. «Ո՞րն է ավելի մեծ՝ անտառահատման բեռնատա՞ր, թե՞ Աստված»: Այդ դեպքում, ինչպե՞ս է պատահում, որ այսօր շատ մարդիկ ասում են, թե հանդիպում են ունեցել Հիսուս Քրիստոսի հետ, սակայն մեկընդմիշտ չեն

փոխվել: Թո՛ւյլ տվեք խորհրդածության մի քանի միտք տալ: Դուք գիտեք, որ ճշմարտությունն եմ ասում: Քանի՞ անգամ են մարդիկ գնում և կրկին ու կրկին «վերընծայում իրենց կյանքերն Աստծուն»: Քանի՞ անգամ են երիտասարդական խմբակների անդամները մասնակցել համաժողովների, սակայն երբ բոցավառվելուց հետո վերադառնում են իրենց եկեղեցիները, նրանց խանդավառությունը տևում է մոտավորապես մեկուկես շաբաթ:

Այդուհանդերձ, մենք պնդում ենք. «Դա Աստծո մեծ շարժն էր»: Ո՛չ, այդպես չէ: Եթե տևական չէ, ուրեմն Աստծո մեծ շարժը չէր. հուզական էր: Հազար ու մի բան կարող էր լինել, սակայն Աստծո մեծ շարժը չէր: Արդյո՞ք Աստված գործել է ձեր կյանքում: Արդյո՞ք Աստված գործում է ձեր կյանքում. «Իրենց պտղի՛ց կճանաչեք նրանց»:

Քրիստոսը շարունակում է՝ ասելով, որ

ամեն ծառ, որ պտուղ չի բերում, կտրվում և գցվում է կրակը. ուստի, կճանաչե՛ք նրանց իրենց պտղից (տե՛ս Մատթ. 7.19,20): Սա լիարժեք ըմբռնելու համար կա մի բան, որը պետք է իմանաք եբրայերենի վերաբերյալ: Երբ ես և դուք ցանկանում ենք ինչ-որ բան շեշտադրել, ի՞նչ ենք անում: Բանավոր խոսքի մեջ բարձրացնում ենք մեր ձայնը: Գրավոր խոսքի մեջ օգտագործում ենք թավ կամ շեղ գիր: Սակայն, հրեաներն այլ կերպ են վարվում. երբ ցանկանում են ինչ-որ բան կամ ինչ-որ բառ շեշտադրել, կրկնում են այն:

Այս է պատճառը, որ Առակաց գրքում և Աստվածաշնչի այլ գրքերում կան եբրայերեն պարալելիզմներ (զուգահեռականություն):

Օրինակ՝ գրված է. «Իսկ անզգամները բնաջինջ կլինեն երկրից, և նենգավորները կխլվեն նրանից» (Առակ. 2.22): Հեղինակը

երկու անգամ նույն բանն է ասում, սակայն տարբեր ձևակերպումներով. նպատակը՝ ավելի մեծ շեշտադրում անելն է: Նույն բանն անում է Տեր Հիսուսն այս հատվածում՝ կրկին ու կրկին, իրենց պտղից կճանաչեք նրանց: Կճանաչեք նրանց այն ճանապարհից, որով քայլում են: Նա շարունակում է. «Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում է և կրակի մեջ գցվում» (Մատթ. 7.19): Ինչի՞ մասին է Նա այստեղ խոսում. Ամենակարող Աստծո դատաստանի մասին, որը մի օր հասնելու է այս աշխարհին, գուցե նաև՝ ձեզ:

Բարեկա՛մս, ես չեմ կարող տեսնել ձեր սիրտը: Ինքս այնքան հեշտ եմ խաբվում իմ սրտից, սակայն կա Մեկը, Ով չի խաբվում: Կամ՝ Մեկը, Ով չի խաբվում ժամանակակից քրիստոնեական մշակույթով: Նա գիտի. իրենց պտղից կճանաչեք նրանց:

5

Հավատքի անպտուղ դավանություններ

Տեր Հիսուսը զգուշացնում է մեզ. «Ոչ թե ամեն Ինձ «Տեր, Տեր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթ. 7.21): Գիտեք, թե ինչ արժե Հիսուս Քրիստոսին հավատալու մասին ձեր դավանությունը, եթե չեք կատարում Հոր կամքը և պտուղ չեք բերում: Բոլորովին ոչինչ չարժե: Ընթերցել եք այս հատվածը: Ուսումնասիրեք այն: Բոլորը չէ, որ կգան Քրիստոսի մոտ և կասեն՝ «Տեր, Տեր», ու

կմտնեն Երկնքի արքայություն: Ոչ բոլորն են փառքի ճանապարհին կանգնած քրիստոնյաներ, ովքեր հրապարակավ դավանում են, թե Քրիստոսին են հետևում: Շատ են այն մարդիկ, ովքեր դավանելու են՝ «Տե՛ր, Տե՛ր», սակայն չեն մտնելու Երկնքի արքայություն:

Գուցե դո՞ւք էլ նրանցից մեկն եք:

Կրկին վերադառնանք եբրայերենին: Քրիստոսը խոսում է նրանց մասին, ովքեր ասում են՝ «Տե՛ր, Տե՛ր»: Նա մեկ անգամ չի նշում «Տեր» բառը: Ի՞նչ է սա նշանակում: Այդ խոսքերն ասողն այն մարդը չէ, ով հանկարծ հասկացավ, որ «Դատաստանը մոտենում է, ավելի լավ է դավանի, որ Հիսուսն է Տերը»: Խոսքն այնպիսի անձնավորության մասին է, ով շեշտադրմամբ ուրիշներին ասում է, որ Հիսուս Քրիստոսն է Տերը: Նա, այս ու այն կողմ քայլելով, Նրան «Տեր» է կոչում: Նա առջևում ձեռքե-

ը պարզած երգում է, երբ երաժիշտները նվագում են, և ասում է՝ «Տե՛ր»: Նա երգում է երգերն ու ասում՝ «Տե՛ր»: Սակայն Հիսուսը կասի նրան. «Երբե՛ք քեզ չեմ ճանաչել, Ինձնից դե՛ն գնա» (Մատթ. 7.23):

Բիլլի Գրեհեմը ամենաբարի և ամենասիրառատ մարդկանցից էր: Այդուհանդերձ, նա ասում էր, թե կարծում է, որ Աստվածաշնչին հավատացող եկեղեցիներ հաճախողների մեծ մասը կորսված է: Ասում էր, որ ուրախ կլիներ, եթե փրկվեր նույնիսկ հինգ տոկոսը այն մարդկանց, ովքեր հավատքի դավանություններ են արել իր ավետարանչական արշավների ժամանակ:

Նիգերիայում մի կնոջ եմ այցելել, ում որդին մեր եկեղեցուց էր և նահատակվել էր՝ սպանվելով մուսուլմանների կողմից: Հյուսիսային Նիգերիայում, երբ ինչ-որ մեկը դավանում է իր հավատքը Հիսուս

Քրիստոսի հանդեպ, հասկանում ես, որ այդ մարդն իր դավանանքի պատճառով շուտով կարող է մահանալ: Դա իրենց վկայությանը որոշակի արժանահավատություն է տալիս: Իսկ ի՞նչ ասենք Ամերիկայի մասին: Ինչպե՞ս հասկանանք դավանության արժեքն այստեղ: Մտածե՛ք այս մասին: Քննե՛ք ձեր կյանքը Սուրբ Գրքի լույսի ներքո: Արդյոք ճանաչո՞ւմ եք Տիրոջը: «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է»:

Ո՞րն է անկեղծ քրիստոնյա լինելու նշանը: Երանի՜ սկսեինք կրկին սովորեցնել այս մասին: Ի՞նչ է պատահել մեր աստվածաբանությանը: Ի՞նչ է պատահել մեր վարդապետությանը: Ի՞նչ է պատահել մեր ուսմունքին: Այն կարծես պատուհանից դուրս է շպրտվել: Ոչ ոք այլևս չի ցանկանում վարդապետություն ուսումնասիրել: Մար-

դիկ պարզապես ցանկանում են երգեր լսել և կարդալ այն, ինչ գրված է քրիստոնեական թեմատիկայով վերնաշապիկների ետնամասին:

Որտեղ է ճշմարտությունը: Ճշմարտությունը հետևյալն է ասում. որպեսզի համոզված լինեք, որ իրապես վերստին ծնված քրիստոնյա եք, ձեր կենսակերպը պետք է համապատասխանի Հոր կամքին:

Գուցե ասեք. «Օ՜, դու խոսում ես գործերի մասին»: Ո՛չ, դա այդպես չէ: Ես խոսում եմ հավատքի վկայության մասին. ասածս հետևյալն է՝ ձեր հավատքի դավանությունը չի ապացուցում, որ դուք վերստին ծնված եք, քանի որ Ամերիկայում շատերն են դավանել, որ հավատում են Հիսուս Քրիստոսին:

Սոցիարցումներ իրականացնող Բարնան ասում է, որ ամերիկացիների վաթսունհինգից յոթանասուն տոկոսը կարծում

է, թե փրկված և վերստին ծնված քրիս-տոնյաներ են: Սակայն այսօր մենք Երկիր մոլորակի ամենաանաստված երկրներից մեկն ենք: Մենք ամեն օր չորս հազար մանկան են սպանում, մինչդեռ մեզնից յոթանասուն տոկոսը վերստին ծնված է համարվում: Ի՞նչ գիտեք, որ ձեր ունեցած հավատքը կեղծ չէ: Որտե՞ղ է այն կենսա-կերպը, որում տեղ ունի Հոր կամքը կա-տարելը, որում կատարվում է Հոր կամքը: Երբ քրիստոնյան անհնազանդ է Հորը, Սուրբ Հոգին գալիս և հանդիմանում է այդ հավատացյալին՝ կա՛մ անձնապես՝ Աստծո գրված Խոսքի միջոցով, կա՛մ Քրիստոսում գտնվող եղբոր կամ քրոջ միջոցով, և Աստ-ված Իր զավակին վերադարձնում է ճիշտ ճանապարհին: Եթե անկեղծ քրիստոնյա եք, չեք կարող փախչել Նրանից:

Թո՛ւյլ տվեք մի օրինակ բերել: Ենթադրենք ես ձեր հովիվն եմ, իսկ դուք

տասնչորս տարեկան եք: Ես վերադառնում եմ ծառայությունից և տեսնում եմ, որ դուք՝ մի խումբ ավազակների հետ, այգում կամ փողոցում կանգնած, անում եք այնպիսի բաներ, որոնք չպետք է անեիք: Եթե դուք մեր եկեղեցու անդամ եք, ապա ես կասեմ՝ նստի՛ր մեքենան, և կտանեմ ձեր տուն, ձեր հոր մոտ: Ես ձեզ վրա չեմ բարկանա, կբարկանամ ձեր հոր վրա ու կասեմ նրան. «Պարո՛ն, դուք՝ որպես հայր, ձեր երեխային անուշադրության եք մատնել՝ թույլ տալով, որ նա դրսում նման իրավիճակի մեջ լինի»:

Կցանկանամ, որ մի բան իմանաք. Աստված անուշադրության մատնող հայր չէ: Եթե դուք մեղքի հետ խաղ եք անում, եթե կարողանում եք սիրել աշխարհն ու աշխարհի բաները, եթե կարողանում եք մշտապես ներգրավվել այս աշխարհի մեջ և անել աշխարհում ընդունված բաները,

եթե ձեր հերոսներն աշխարհիկ մարդիկ են, եթե ցանկանում եք նրանց նմանվել և վարվել նրանց պես, եթե անում եք նույնը, ինչ նրանք ենք անում, ապա խնդրում եմ՝ ուշադրությունն դարձրեք խոսքերիս՝ ամենայն հավանականությամբ, դուք իրապես չեք ճանաչում Աստծուն ու չեք պատկանում Նրան:

6

Արդյո՞ք Հիսուսը ճանաչում է քեզ

Ահա՛ թե էլ ինչ է ասում Տեր Հիսուսը. «Շատերը կասեն Ինձ այն օրը՝ «Տե՛ր, Տե՛ր», չէ՞ որ Քո անունով մարգարեացանք, և Քո անունով դևեր հանեցինք, և Քո անունով շատ զորություններ գործեցինք: Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.22,23):

Դուք ասում եք, որ այս երկրի երեսին ամենակարևոր բանը Հիսուս Քրիստոսին

ճանաչելն է: Դա ճիշտ չէ: Ամենակարևորն այն է, որ Հիսուս Քրիստոսը ճանաչի ձեզ: Վաղն ինձ թույլ չեն տա մտնել Սպիտակ տուն, եթե պարզապես քայլեմ դեպի դարպասը և բոլորին ասեմ, որ ճանաչում եմ նախագահին: Ինձ ներս կթողնեն այն դեպքում, եթե նախագահը դուրս գա, և ինձ մատնացույց անելով՝ ասի. «Ես ճանաչո՛ւմ եմ այդ մարդուն»:

Դուք կարող եք ասել, թե ճանաչում եք Հիսուսին, սակայն հարցս միայն այն չէ՝ արդյո՞ք ճանաչում եք Հիսուսին, այլև՝ արդյո՞ք Հիսուսը ճանաչում է ձեզ: Տեսե՛ք, թե ինչպես է Քրիստոս Տերը նկարագրում կորսված մարդուն. «Դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»: Հունարենում օգտագործված է *«anomia»* բառը: Այն բաղկացած է երկու տարրից՝ ժխտական մասնիկ *«a»*-ն՝ ժխտում, և *«nomos»* արմատը, որը նշանակում է «օրենք»: Այն բնութագրում է մեկին, ով «առանց օրենքի» է.

ահա թե ինչ իմաստ է կրում այդ ամբողջ արտահայտությունը ճշգրիտ թարգմանությամբ: Երանի՜ կարողանայի ձեր կողքին լինել, ձեռքերս դնել ձեր ուսերին և ասել. «Առանց օրենքի կյանք վարողներին Հիսուսն ասելու է. «Դե՛ն գնացեք Ինձնից, դո՛ւք, որ ասում եք, թե Իմ աշակերտներն եք, որ դավանել եք Ինձ՝ որպես Տեր, սակայն ապրում եք այնպես, կարծես երբևէ ձեզ չեմ տվել օրենք, որին պետք էր հնազանդվել»»:

Քիչ առաջ բնութագրեցի Հյուսիսային Ամերիկայի քրիստոնյաների իշխող մեծամասնությանը: Բնութագրեցի նաև ամբողջ աշխարհի ժամանակակից ավետարանականների իշխող մեծամասնությանը:

Երբ ինչ-որ մեկը սկսում է խոսել օրենքից և աստվածաշնչյան սկզբունքներից՝ ասելով, թե ինչ պետք է անենք և ինչ չպետք է անենք, ինչպես պետք է ապրենք և ինչպես չպետք է ապրենք, բոլորը գոչում

են՝ «կրոնավոր»: Սակայն, Հիսուսն ասաց. «Դե՛ն գնացեք Ինձնից, դո՛ւք, որ առանց օրենքի եք ապրում. դուք Ինձ Տեր եք կոչում, սակայն ապրում եք այնպես, կարծես երբևէ օրենք չեմ տվել ձեզ»:

Արևմուտքի ժամանակակից քրիստոնեության մեջ հաճախ մտնում ենք եկեղեցի և գոչում՝ փա՛ռք Աստծուն, իսկ հետո շարունակում ապրել աշխարհի մյուս մարդկանց նման և ձևացնում, թե ամեն բան կարգին է: «Դու պարզապես մարմնավոր ես»,- առաջարկում ենք մեր տեսակետը:- «Գուցե մի օր վերադառնաս»: Գիտե՞ք, թե ինչ է տեղի ունեցել մեր սխալ ավետարանչության պատճառով: Ունենք բազմահազար երեխաներ, ում մասին ասում ենք, թե փրկվել են արձակուրդների ընթացքում անցկացվող աստվածաշնչյան դպրոցում: Նրանց գերակշիռ մասը, երբ դառնում է տասնհինգ տարեկան, մտնում է այս աշխարհ և ապրում դևերի նման: Իսկ հետո՝

մոտավորապես երեսուն տարեկան հասակում, վերադառնում են ու վերընծայում իրենց կյանքերն Աստծուն: Հնարավոր է, որ այդ պահին փրկություն են ստանում, սակայն, միևնույն է, դա պետք է դրսևորվի նրանց կյանքում: Քրիստոնեությունը ավելին է, քան մարդկանց ասելը, որ իրենք փրկված են, քանի որ ընդունել են, որ Հիսուսն է Տերը: Սատանան ևս ընդունում է, որ Հիսուսն է Տերը:

Սակայն, արդյո՞ք ձեր կյանքը փոփոխման ընթացքի մեջ է:

7

Մարդկանց երկու տեսակ

Այնուհետև Քրիստոսն Իր խոսքը եզրափակում է՝ խոսելով մարդկանց երկու տեսակի մասին: Նա խոսում է երկու տեսակ հիմքերի մասին: Մենք պետք է ճիշտ ընկալենք սա, ինչի համար էլ կարևոր է ուսումնասիրել աստվածաբանություն և պատմություն: Ժայռի և ավազի վերաբերյալ այս հատվածի ժամանակակից մեկնությունը հետևյալն է. «Եթե դու քրիստոնյա ես, ապա պետք է կյանքդ կառուցես ժայռի վրա, քանի որ, եթե ավազի վրա կառուցես, կլինես դժբախտ քրիստոնյա, և

կյանքդ ճիշտ հունով չի ընթանա»: Սակայն դա այն *չէ*, ինչ սովորեցնում է Հիսուսը. պատմական մեկնությունն էլ հաստատում է խոսքերս: Այս հատվածը պատմության ընթացքում հազիվ թե նման մեկնաբանություն ստացած լինի:

Թո՛ւյլ տվեք տալ ձեզ ճիշտ մեկնությունը: Կա երկու ճանապարհ՝ նեղ ճանապարհ և լայն ճանապարհ:

Ո՞ր ճանապարհով եք գնում դուք: Կա ծառի երկու տեսակ՝ բարի ծառ, որը բարի պտուղ է բերում, այսինքն՝ մարդ, ով Երկինք է գնում, և չար ծառ, որի չար պտղից եք իմանում, որ այն չար է, այսինքն՝ մարդ, ով դժոխք է գնում: Վերջին ծառը կտրվելու և գցվելու է կրակը: Կան մարդիկ, ովքեր Հիսուսին Տեր են դավանում և կատարում են երկնային Հոր կամքը, և կան այնպիսիք, ովքեր Հիսուսին Տեր են դավանում, սակայն չեն կատարում երկնային Հոր կամքը: Վերջիններս դժոխք են գնում ոչ

թե ինչ-որ գործեր չանելու պատճառով, այլ՝ հավատք չունենալու պատճառով, ինչը դրսևորվում է գործեր չանելով:

Տեր Հիսուսը շարունակում է: Նա հստակ ասում է, որ այստեղ պատկերված չեն երկու քրիստոնյաներ, ովքեր իրենց տները տարբեր հիմքերի վրա են կառուցում: Ո՛չ. այստեղ խոսվում է փրկված մարդու և կորսված մարդու մասին: Կորսված մարդը լսում է Աստծո Խոսքը, սակայն հիմք չի գցում: Նրա կյանքում որևէ կերպ չի արտացոլվում այն, որ Աստծո Խոսքն է ձևավորում, կառուցում ու պահպանում իր կյանքը: Նրա կյանքը Աստծո ճշմարտության հետ կապ չունի:

Մեր մեծ հարանվանություններում քանի՞ մարդ ունի փրկության իրական հույս՝ անկախ մեր ունեցած բոլոր թվերից, անկախ այն ամենից, ինչ ասում ենք. եթե մեր մարդկանց պարզապես համեմատենք սուրբգրային այս հատվածի հետ:

Իսկ ինչպե՞ս կպատասխանեիք հետևյալ հարցերին. «Արդյո՞ք ձեր ամուսնությունը կառուցում եք Աստծո Խոսքի հիման վրա: Արդյո՞ք ձեր երեխաներին դաստիարակում եք Աստծո Խոսքի հիման վրա: Արդյո՞ք ձեր ֆինանսական հարցերը կարգավորում եք Աստծո Խոսքի հիման վրա: Արդյո՞ք այս աշխարհի բաներից զատված եք ապրում՝ հիմնվելով Աստծո Խոսքի վրա»: Քանի՞սը կկարողանային հաստատուն պատասխան տալ այս հարցերին:

Սակայն այս հարցերից ոչ մեկը չի բարձրաձայնվում: Փոխարենը՝ լսում ենք. «Ես դավանում եմ Հիսուսին: Նա իմ Փրկիչն է: Այդպես է ասել կիրակնօրյա դպրոցի իմ ուսուցչուհին»: Լեոնարդ Ռավենհիլը՝ իմ ծանոթներից մեկը, նախքան մահանալն ասել է. «Մկրտական շատ եկեղեցիներում ընդամենը մեկ անգամ եմ քարոզում»: Այլ տեղերում նույնպես մեկ անգամ եմ քարոզում: Ես կարող էի բարձրանալ բեմ, կանգ-

նել ամբիոնի հետևում և այնպիսի բառապաշարով խոսել, որ ցնցվեիք, կարող էի քարոզել բաներ, որոնք ձեզ օդ կբարձրացնեին և սենյակով սավառնել կտային: Կարող էի պատմել պատմություններ, որոնք կծիծաղեցնեին ձեզ, ինչպես նաև պատմություններ շների ու տատիկների մասին, որոնք կհուզեին ձեզ, սակայն ես ինձ լսողներին չափից ավելի եմ սիրում, ուստի նման պատմություններ չեմ պատմի, իսկ ձեզ չափից ավելի եմ սիրում, ուստի նման բաներ չեմ գրի:

Քանի որ Աստծո Խոսքը ճշմարիտ է, գիտեմ, որ կան մարդիկ, ովքեր իրենց փրկված են կարծում, սակայն իրականում փրկված չեն:

Գիտեմ, որ ձեզնից ոմանք նայում են ուրիշներին ու մտածում. «Ես փրկված եմ: Ես այնպիսին եմ, ինչպիսին բոլորն են իմ երիտասարդական խմբակում»: Իսկ ինչո՞ւ եք կարծում, թե մյուսները փրկված են:

«Ես նման եմ իմ ծնողներին»: Կամ, գուցե ասեք. «Ես նման եմ իմ եկեղեցու մեծահասակներին, սարկավագին կամ հովվին»: Ինչպիսի՜ անհեթեթություն. Քրիստոսի գալուստի օրը դուք չեք դատվելու՝ համեմատվելով նրանց հետ: Այս հարցը, որն ուղղում եմ ձեզ, վերաբերում է ձեր շնչին և ձեր հարաբերությանը Աստծո հետ Քրիստոսում: Աղոթում եմ, որ մի օր, երբ երեխաներս մեծանան, նրանց առջև կանգնի մի քարոզիչ, ով ի հայտ կբերի աշխարհի կրոնի դատարկությունը և կասի. «Բավակա՛ն է տեղ տալ այդ անհեթեթությանը: Եկե՛ք գործի անցնենք: Ի՞նչ է ասում Աստծո Խոսքը: Ի՞նչ վիճակում է ձեր կյանքը վերջին օրվա լույսի ներքո, այն բոցավառվող կրակի առջև, որն Աստծո սրբությունն է»:

Բարեկա՛մս, արդյո՞ք վերջին օրը կերևա ձեր դավանության ճշմարտացիությունը: Արդյո՞ք դուք փրկված եք: Ես չեմ խոսում ինչ-որ անորոշ պատկերացման մասին՝

«կարծում եմ՝ փրկված եմ»: Գիտե՞ք, որ կա ճանապարհ, որ մարդուն ուղիղ է թվում, սակայն մահվան է տանում:

Գուցե ինչ-որ մեկն ասի. «Ես սրտիս խորքում զգում եմ, որ փրկված եմ»: Այդ դեպքում թո՛ւյլ տվեք այսպիսի հարցադրում անել: Երբևէ կարդացե՞լ եք, որ սիրտը խորամանկ է և ապականված՝ ո՞վ կարող է հասկանալ այն: Արդյոք ավելի լավ չէ՞ դառնալ Սուրբ Գրքի վկայությանը, քան ձեր ապականված սրտի բնազդին:

Մեկ ուրիշը կարող է ասել. «Գիտեմ, որ փրկված եմ, քանի որ մայրիկս, հայրիկս, հովիվս և մյուսները ասել են ինձ, որ փրկված եմ»: Իսկ ես հարցնում եմ հետևյալը՝ իսկ ի՞նչ է ասում Աստծո՛ Խոսքը:

8

Իրական սրբություն

Այնքան շատ ենք խոսում արմատական քրիստոնյա լինելու մասին: Արմատական քրիստոնյաները նրանք չեն, ովքեր թռչկոտում են փառաբանության ժամանակ: Արմատական քրիստոնյաներն այն մարդիկ չեն, ովքեր պարզապես կրում են քրիստոնեական գրվածքով վերնաշապիկներ:

Արմատական են այն քրիստոնյաները, ովքեր կրում են Սուրբ Հոգու պտուղը: Ովքեր հարգանք և պատիվ են տալիս իրենց ծնողներին, նույնիսկ երբ զգում են, որ ծնողները սխալ են: Արմատական են այն

քրիստոնյաները, ովքեր գայթակղիչ չեն հագնվում՝ իրենց մարմինները ցուցադրելու համար:

Եթե ձեր հագուստն ընդգծում է ձեր դեմքի վայելչությունը, ապա Աստված հավանում է այդ հագուստը: Սակայն եթե այն ընդգծում է ձեր մարմինը, ապա դա պարզապես հեշտամոլություն է, և Աստված ատում է այն, ինչ անում եք:

Ես խոսում եմ քրիստոնեության մասին: Կյանքս անցկացրել եմ ջունգլիներում, անցկացրել եմ՝ մրսելով Անդյան լեռներում: Տեսել եմ, թե ինչպես են մարդիկ մահանում: Տեսել եմ, թե ինչպես են մուսուլմանները գնդակահարում մի փոքրիկ տղայի՝ հինգ գնդակ արձակելով նրա որովայնի մեջ՝ այդպես թողնելով մայթեզրին, այն պատճառով, որ այդ տղան լալիս էր և ասում. «Ես այնպես եմ վախենում, սակայն չեմ կարող ուրանալ Հիսուս Քրիստոսին: Խնդրո՛ւմ եմ, մի՛ սպանեք ինձ. ես չե՛մ

կարող ուրանալ Նրան»: Այդ տղան մահացավ իր շուրջը գոյացած արյան լճի մեջ: Իսկ դուք խոսում եք արմատական քրիստոնյա լինելու մասին, քանի որ համաժողովի եք գնացել: Ես խոսում եմ իրական սրբության մասին: Խոսում եմ իրական աստվածապաշտության մասին:

Ինչ կաներ Աստծո շարժը մեզանում: Այն բոլորիս մեջ մեղքի հանդիմանություն կբերեր, բոլորս երեսնիվայր կընկնեինք և կողբայինք, քանի որ նայում ենք բաներ, որոնք Աստված ատում է, կրում ենք բաներ, որոնք Աստված ատում է, վարվում ենք աշխարհի նման, կերպարանվել ենք աշխարհի նման, բուրում ենք աշխարհի նման. կսգայինք, որ անում ենք բաներ, որոնք վշտացնում են Աստծուն և անտեղյակ ենք մեր մեղսալիությունից և Աստծո Խոսքի մակերեսային իմացությունից:

Չնայած այն բանին, որ պնդում ենք, թե Սուրբ Գիրքն Աստծո անսխալական

Խոսքն է, մեր քարոզներն ամբողջությամբ բաղկացած են ոչ աստվածաշնչյան օրինակներից, պատմություններից և փոքրիկ զվարճալի հեքիաթներից: Օ՜, եթե Աստված լույս շողացներ մեզ վրա, և մենք դադարեինք մեղք գործելուց, հրաժարվեինք այն ամենից, ինչը հաճելի չէ Նրան, վազեինք Նրա մոտ, ճաշակեինք Նրան և սիրեինք Նրան...

Աղոթում եմ, որ Աստված այսօր միսիոներներ բարձրացնի: Ես ձեզ նույնը չեմ ցանկանում, ինչ ուրիշները կարող են մաղթել: Գուցե ձեր ծնողները ցանկանում են, որ դուք ունենաք ապահովություն, ապահովագրություն և գեղեցիկ տներ: Նրանք ցանկանում են, որ դուք մեքենաներ ունենաք և հարգանք վայելեք: Ես ձեզ համար ցանկանում եմ այն, ինչ կցանկանայի որդուս համար. կցանկանայի, որ նա մեկ օր վերցներ Հիսուս Քրիստոսի հոգևոր դրոշը և քարոզեր Աստծո Խոսքը՝ Ավետարանի

դրոշը դնելով մի ժայռի վրա, որտեղ նախկինում որևէ մեկը երբևէ չի դրել: Ես ցանկանում եմ, որ նա բացականչի. «Հիսուս Քրիստո՛սն է Տերը», նույնիսկ եթե դա որդուս իր կյանքն արժենա: Ինչ կլինի, եթե մեկ օր նա ինձ ասի այն, ինչ ես եմ ասել երիտասարդ հասակում. «Գնո՛ւմ եմ սարեր: Գնո՛ւմ եմ ջունգլիներ»:

Մարդիկ ինձ ասում էին. «Չե՛ս կարող այնտեղ գնալ: Խելագարվե՛լ ես: Պատերա՜զմ է: Կմահանա՛ս»: Երբ որդիս մեծանա, վերցնի ուսապարկը և ցանկություն հայտնի գնալու, ես կաղոթեմ նրա համար և կասեմ. «Գնա՛: Աստված քեզ հետ: Եվ եթե մահանաս, որդի՛ս, կտեսնեմ քեզ փառքի մեջ և կպատվեմ քո մահը»:

9

Ո՞րն է քո պատասխանը

Այս ամենի լույսի ներքո արդյո՞ք կարիք ունեք խոստովանելու. «Ես ապրել եմ ստի մեջ: Ես քրիստոնյա եմ, սակայն սիրում եմ աշխարհը, նման եմ աշխարհին, բուրում եմ աշխարհի նման և ինքս ինձ ատում եմ դրա համար: Այնպես եմ հոգնել, այսպես կոչված, «քրիստոնեությունից», որում ապրում եմ: Նողկանք եմ զգում դրանից և ցանկանում եմ փրկվել»: Եթե դա այդպես է, ապա հիմա ապաշխարեք ձեր մեղքերից, եկեք Հիսուս Քրիստոսի մոտ՝ ստա-

նալու ներում և հավիտենական կյանքի շնորհը:

Իսկ ի՞նչ կասեն նրանք, ովքեր պնդում են, որ քրիստոնյա են: Արդյո՞ք ձեր կյանքով պատվում եք Հիսուս Քրիստոսին: Արդյո՞ք Նրա Խոսքի մեջ փնտրում եք, թե ինչպես պետք է ապրել: Ժամանակակից Արևմուտքի եկեղեցիներում մաքրագործման միայն երկու իրական հնարավորություն կա:

Առաջին հնարավորությունը մեր քարոզչության և Աստծո Խոսքի ուսումնասիրության ամբողջական բարեկարգումն է, մյուսը՝ կատաղի, սարսափելի հալածանքը: Միայն սրանք կարող են մաքրագործել Քրիստոսի եկեղեցին: Աղոթում եմ, որ դուք վերադառնաք Խոսքին: Դուք պետք է իմանաք և պետք է ասեք. «Լա՛վ, հիմա ինչպե՞ս պետք է վարվեմ ծնողներիս հետ»:

Գնացեք դեպի Խոսքը, գտեք պատասխանը և հնազանդվեք: «Ինչպե՞ս պետք է հագնվեմ»: Գնացեք դեպի Խոսքը, գտեք պատասխանը և հնազանդվեք: «Ինչպե՞ս պետք է խոսեմ: Ինչպե՞ս պետք է լսեմ»: Ամեն միտք, բառ և արարք հնազանդեցրեք Հիսուս Քրիստոսին:

Եթե ընթերցում եք այս գիրքն ու ընդունում ճշմարտությունը, ես ցանկանում եմ, որ ապրեք Հիսուս Քրիստոսի համար հենց այնտեղ, որտեղ կաք: Գուցե ասեք. «Ցանկանում եմ ապրել Հիսուս Քրիստոսի համար, սակայն չգիտեմ՝ ինչպես»: Ասեք այդ մասին ձեր հովվին և օգնություն խնդրեք նրանից: Եթե հավատարիմ հովիվ չունեք, ապա փնտրեք այդպիսի հովվի: Եթե ընդհանրապես հովիվ չունեք, ապա փնտրեք ու գտեք հավատարիմ հովվի և ասեք նրան: Շուտով պարզ կդառնա՝ արդյո՞ք

Քրիստոսին հետևելու ձեր ցանկությունն իրական է: Ինչպե՞ս:

Այն կմնա: Ահա թե ինչպես ենք իմանում, որ այն Աստծուց էր:

Եթե Քրիստոսն իսկապես կանչել է ձեզ և նոր սիրտ է տվել, ապա դա մնայուն կլինի: Իսկ եթե քարոզ լսելուց կամ Գիրք կարդալուց հետո մակերեսորեն մի քանի փոփոխություն անեք, սակայն մի քանի շաբաթ անց վերադառնաք աշխարհ և ապրեք աշխարհի նման, դրա պատճառն այն է, որ իրականում ոչինչ չի փոխվել: Գուցե ձեր մեջ պարզապես ինչ-որ զգացմունք էր արթնացել: Եթե իսկապես Տիրոջից ինչ-որ բան եք ստացել, ապա այն կդիմակայի: Եթե նույնիսկ փորձեք փախչել դրանից, միևնույն է, չեք կարողանա:

Ասում եք, որ Հիսուս Քրիստոսին ճանաչելու կարիք ունեք. ուրեմն կանչե՞ք

Նրան, մտեք նեղ դռնով և կփրկվեք: Ասում եք, որ Հիսուս Քրիստոսին հետևելու կարիք ունեք, ուրեմն կառչեք Նրանից, գնացեք նեղ ճանապարհով և վերջում կհասնեք փառքին:

Եզրափակիչ աղոթք

Աստված, իմ հոգը չէ համբավս: Իմ հոգը չէ, թե ինչ են մտածում մարդիկ: Ես ցանկանում եմ պատվել Քեզ: Ցանկանում եմ, որ մեղավորները փրկվեն, իսկ ովքեր փրկված են, դադարեն նայել իրենց շուրջը տարածված մշակութային քրիստոնեությանը, որը Դու ատում ես և փսխում: Ցանկանում եմ, որ նրանք նայեն Աստծո Խոսքին ու ասեն. «Ես կհետևեմ Հիսուսին»:

Աղոթում եմ հովիվների համար, որ լցնես նրանց իմաստության, սիրո, համարձակության և զանազանության հոգով: Եվ

թանկագի՛ն Աստված, ինչ գին էլ, որ պահանջվի, աղոթում եմ, որ բարձրացնես միսիոներների: Փրկի՛ր մեր երեխաներին, բարձրացրո՛ւ նրանց և ուղարկի՛ր ճակատամարտի ամենաթեժ կետերը: Բարձրացրո՛ւ քարոզիչների և հովիվների, ովքեր գիտեն Աստծո Խոսքը: Աստվա՛ծ իմ, խնդրո՛ւմ եմ, գործի՛ր մեզանում: Ամե՛ն:

Զրույցները մեծ արժեք չունեն, հավատքի դավանությունը՝ նույնպես, եթե չկա ապաշխարություն: Սակայն մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ մարդիկ ավելի շատ ապավինում են մեկանգամյա աղոթքին, քան սրտի նորոգությունն արտացոլող կյանքին: Մեջբերելով Մատթեոսի 7.13-27-ում գրված խոսքերը՝ Փոլ Վոշերը հիշեցնում է Հիսուսի պնդումն այն մասին, որ Իր ճանապարհը նեղ է, և դրանով գնացողները բարի պտուղ են բերում ու ապավինում Աստծո Խոսքի ամուր հիմքին: Անտեսելով Քրիստոսի այս զգուշացումները՝ շատերը հայտնվել են կործանում տանող լայն ճանապարհին: Եթե չեք հետևում Տիրոջ ճանապարհին, մի՛ կարծեք, թե երկինք եք գնում:

«Փոլ Վոշերը օժտված ավետարանիչ է, ով տալիս է Ավետարանի սուր ուղերձը, որը թափանցում է ուղիղ սիրտը: Այս գիրքը նրա քարոզած ուղերձի ընդլայնված տարբերակն է, որը խորը ազդեցություն է ունեցել բազմաթիվ մարդկանց կյանքերում: Ուշադրությա́մբ ընթերցեք գրքի էջերը, քանի որ դրանք բացահայտում են դարձի չեկած սրտերը կամ տալիս են փրկության երանելի հաստատությունը նրանց, ովքեր ճշմարտապես հավատացել են: Թո՛ղ որ այս սադրող ճշմարտությունները հասնեն ձեր շնչին՝ հավիտենական օգուտի համար»:

— Սթիվեն Զ. Լոուսոն, նախագահ «OnePassion Ministries», Դալլաս, Տեխաս

ՓՈԼ ՎՈՇԵՐԸ տասը տարի ծառայել է Պերուի Հանրապետությունում՝ որպես միսիոներ: Այդ ընթացքում հիմնադրել է «HeartCry» Միսիոներական համայնքը՝ միտված օժանդակելու պերուացիներին, ովքեր եկեղեցիներ են հիմնում: Այժմ Փոլը «HeartCry» Միսիոներական համայնքի (www.heartcrymissionary.com) ծառայողներից է: Նա և կինը՝ Չարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրոնվինը: